

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 16/1**

**1 ապրիլի 2014 թ.**

Քննարկվեց «Պրոֆիքլին» ՍՊԸ դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պաշտոնատար անձանց գործողությունների դեմ:

**«Պրոֆիքլին» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

«Պրոֆիքլին» ՍՊԸ-ն 2013 թ-ին ցանկանալով հաշվառվել որպես ԱԱՀ վճարող և առաջնորդվելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ կետով, ներկայացրել է «Հայտարարություն որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և հաշվառման համար կիրառելու մասին» (1104-Ն 04.08.2011 թ.), հայտարարությունը:

Ընկերությունը 2013 թ-ի ընթացքում դուրս է գրել էլեկտրոնային հաշիվներ, ներմուծել է ապրանքներ և ներկայացրել ԱԱՀ հաշվարկներ: Սակայն 2014 թ-ին Արաբկիրի ՀՏ-ն պնդում է, որ «Պրոֆիքլին» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) պետք է ներկայացնի «Հայտարարություն ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ» (51-Ն 11.02.2011թ), այդ իսկ պատճառով «Պրոֆիքլին» ՍՊԸ-ն չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

Ընկերությունը խնդրում է 2013 թ-ի հաշվետու ժամանակաշրջանում իրեն համարել ԱԱՀ վճարող:

**ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Խնդրո առարկա հարցի վերաբերյալ Հանձնաժողովն բազմիցս արտահայտել է իր դիրքորոշումը, որը կայանում է հետևյալում:

<Ավելացված արժեքի հարկի մասին> ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 3-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ վճարող է համարվում, մասնավորապես, որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող գրանցված իրավաբանական անձը՝ ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից մինչև հայտարարությունում նշած տարվա ավարտը, բայց ոչ շուտ, քան հայտարարությունը ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանի առաջին օրացուցային օրվանից, եթե անձը կարող է համարվել շրջանառության հարկ վճարող, սակայն իր հաշվառման վայրի հարկային մարմնին վերադաս հարկային մարմնի սահմանած ձևով գրավոր հայտարարություն է ներկայացրել ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

Հայտարարության ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11.02.2011թ. թիվ 51-Ն հրամանով (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգում 84-րդ ձև), որի ներկայացման դեպքում է միայն շրջանառության հարկ վճարող համարվելու պայմաններին բավարարող անձը համարվում ԱԱՀ վճարող: Նշված հայտարարությունը չներկայացնելու դեպքում անձը չի կարող համարվել ԱԱՀ վճարող:

ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի <Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին> թիվ 1104-Ն որոշմամբ սահմանված է հարկային մարմնում ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը, որի համաձայն՝ ԱԱՀ վճարող համարվող անձինք հարկային մարմն են ներկայացնում իրենց՝ որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու հայտարարություն (հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային

համակարգում 71-րդ ձև): Որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու համար օրենքի պահանջ է, որ հարկ վճարողը արդեն իսկ հանդիսանա ԱԱՀ վճարող:

Ավելին, ՀՀ կառավարության 04.08.2011 թ-ի «Ավելացված արժեքի հարկ վճարողների հաշվառման կարգը հաստատելու մասին» թիվ 1104-Ն որոշմամբ սահմանվել է, որ որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու հայտարարություն չեն ներկայացնում որպես ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն տված անձինք:

Ելնելով վերոգրյալից, որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու և ԱԱՀ վճարողի հաշվառման համար կիրառելու մասին հայտարարության ներկայացումը հիմք չէ անձին ԱԱՀ վճարող համարելու համար: Հաշվի առնելով, որ հայտարարություն ներկայացրած անձի՝ ԱԱՀ վճարող համարվելու օրենսդրական հիմքերը հայտարարությունը ներկայացնելու պահին հարկային մարմնին հայտնի չեն, հարկային մարմնին ընդունել է ԱԱՀ վճարող հաշվառելու հայտարարությունը, ինչը, սակայն, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն չի նշանակում, որ հաշվառման համար հայտարարություն ներկայացրած հարկ վճարողը համարվում է ԱԱՀ վճարող:

Հանձնաժողովը հաշվի է առնում նաև այն հանգամանքը, որ ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013 թ-ին կայացած քննարկման N 23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով հանձնարարվել է բոլոր այն դեպքերում, երբ տնտեսավարող սուբյեկտն իր տնտեսական գործունեությունը տեղափոխել է ընդհանուր հարկման դաշտ և ցուցաբերել բարեխիղճ հարկատուի վարքագիծ (ժամանակին կատարել է իր հարկային պարտավորությունները)՝ չկիրառել օրենսդրորեն նախատեսված (ընթացակարգերի խախտմամբ ԱԱՀ վճարող համարվելու համար) պատժամիջոցները:

Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի մոտ 27.11.2013 թ-ին կայացած քննարկման N 23.6/[177920]-13 արձանագրության 2-րդ կետի 2-րդ ենթակետով տրված հանձնարարականը, Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

## ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Պրոֆիբլին» ՍՊԸ դիմում-գանգատը բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ